


21.11.2019 15:23



Ջանգվածային լրատվամիջոցների հրապարակումների առիթով ՀՀ փաստաբանների պալատում քննարկվել են փաստաբաններ Հայկ Ալումյանի և Ռուբեն Սահակյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցերը:

\*\*\*\*\*

**Հայկ Ալումյանի մասով**, Փաստաբանների պալատի նախագահը որոշել է կարգապահական վարույթ հարուցելը մերժել:

Փաստաբանների պալատը գտել է, որ «...փաստաբանը պարտավոր է՝

- հարգանքով վերաբերվել դատավորի նկատմամբ.

- խուսափել դատավորների և դատարանի ընթացակարգերի ու որոշումների վիրավորական քննադատությունից:

Այս մոտեցումն ամենևին չի նշանակում, որ փաստաբանը պետք է անթույլատրելի զգուշություն ցուցաբերի ի վնաս իր վստահորդի շահերին:

Հետևաբար՝ այս իրավիճակում անհրաժեշտ է տեսնել, թե ո՞րն է քննադատության և վիրավորական քննադատության սահմանը և արդյո՞ք Հայկ Ալումյանն առերևույթ հատել է այդ սահմանը:

Հայկ Ալումյանը դատավորի հետ կապված իր խոսքը կառուցել է վարչապետի հայտարարության հիման վրա:»:

Որոշման եզրահանգման համաձայն՝ «.. երբ վարչապետի հայտարարության մեջ ներկայացվող խոսքերը չեն համարվել վիրավորական դատական իշխանության կողմից, ապա փաստաբան Հայկ Ալումյանի կողմից այդ խոսքերի կրկնությունը, ընդ որում՝ աղբյուրի հղումով, առերևույթ չի կարող համարվել կարգապահական վարույթ հարուցելու հիմք:»:

\*\*\*\*\*

**Ռուբեն Սահակյանի մասով**, Փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալը որոշել է Ռուբեն Սահակյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտման

հատկանիշներով:

Ըստ ԶԼՄ հրապարակումների Ռուբեն Սահակյանը լրագրողների հետ ճեպագրուլյցի ընթացքում խոսելով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աննա Դանիբեկյանի մասին, արտաբերել է հետևյալ միտքը. «Նա չի տիրապետում իր մասնագիտությանը: Նախորդ նիստում չհասկացավ, թե ինչի մասին եմ խոսում և ասաց՝ «կարճ կապեք»... Եթե չես հասկանում, ինչո՞ւ կարճ կապեմ, գնա ձեր տուն, կատուներին դատապարտի: Քո կատուների գործը լսի, ոչ թե մարդկանց ... դե, նա շատ կատուներ է պահում»:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ 16 (2013) կարծիքի 25-րդ կետի համաձայն՝ ... Պրոֆեսիոնալ գործընկերների նկատմամբ հարգանքի, օրենքի գերակայության և արդարադատության արդար իրականացման հարգանքի՝ Փաստաբանների և իրավաբանների միությունների եվրոպական խորհրդի «Եվրոպայում իրավաբանի մասնագիտության հիմնարար սկզբունքների մասին» խարտիայում սահմանված սկզբունքներով պահանջվում է խուսափել գործընկերների, առանձին դատավորների և դատարանի ընթացակարգերի ու որոշումների վիրավորական քննադատությունից:

Կարգապահական վարույթը հարուցվել է փաստաբան Ռուբեն Սահակյանի կողմից դատավոր Աննա Դանիբեկյանի հասցեին առերևույթ զսպվածությունը և բարեկրթությունը սահմանազանցող արտահայտություններով փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը խաթարելու վարքագիծը ստուգելու նպատակով:

**Փաստաբանների պալատը հարկ է համարում արձանագրել, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելն ինքնին չի նշանակում, որ փաստաբանը թույլ է տվել կարգապահական խախտում և այդ հարցի վերջնական պատասխանը կարող է տրվել միայն կարգապահական վարույթի իրականացման արդյունքում՝ Պալատի խորհրդի համապատասխան որոշմամբ:**

**Հ.Գ. Փաստաբանների պալատը տեղեկացնում է նաև, որ դեռևս 25.10.2019թ. փաստաբաններ Հայկ Ալումյանը, Ռուբեն Սահակյանը, Արամ, Օրբեյանը, Արամ Վարդևանյանը և Հովհաննես Խոլդոյանը դիմել են ՀՀ փաստաբանների պալատին, Մարդու իրավունքների**

**պաշտպանին, բարձրագույն դատական  
խորհրդին, ՀՀ ոստիկանությանը, ՀՀ դատական  
դեպարտամենտին՝ խնդրելով միջոցներ  
ծեռնարկել, որ Ռոբերտ Քոչարյանի գործով  
իրենց պաշտպանության ժամանակ  
քաղաքացիները վիրավորական  
արտահայտություններ չկատարեն կամ  
ոստիկանությունն արձագանքի այդ  
քաղաքացիների գործողություններին:**

**Փաստաբանների պալատը նշված դիմումի  
հիման վրա, 30.10.2019թ. գրություն դիմել է՝**

- **ՀՀ վարչապետին՝** խնդրելով գործուն միջոցներ  
ծեռնարկել քաղաքացիների կողմից  
փաստաբաններին՝ իրենց մասնագիտական  
գործունեությունն իրականացնելու առնչությամբ  
վիրավորելու և զրպարտելու վարքագիծը կանխելու  
կապակցությամբ:

- **ՀՀ արդարադատության նախարարին՝** ՀՀ  
քրեական օրենսգիրքը՝ «Փաստաբանին իր  
մասնագիտական գործունեությունն իրականացնելու  
առնչությամբ վիրավորելը» հանցակազմով լրացնելու  
վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների  
առաջարկության իրագործման խնդրանքով:

**Բեռնել ՀՀ ՓՊ նախագահի 21.11.2019թ. № 478-Ա  
որոշումը Հայկ Ալումյանի վերաբերյալ**

**Բեռնել ՀՀ ՓՊ նախագահի 21.11.2019թ. № 480-Ա  
որոշումը Ռուբեն Սահակյանի վերաբերյալ**

ՀՀ փաստաբանների պալատի

մամուլի ծառայություն